

ԾԱՆԿԱՔԱՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Անի-սահ քերեց :

Անտառակին աւարաւ
Աշուն գալուէ արկ գերկրաւ .
Թուփք եւ մացառք հողանիք ,
Սոխակ չունի դայլայլիկ :
Յայն ինչ կենաց այգուն փայլ ,
Մանուկ հիւանդ յամրաքայլ ,
Խաղայր գընայր յերթ վերջին
Յիւրն անտառակ սիրելին .
« Մայրիդ ողջ կաց . . . ընկճիմ ես .
Սուգ քո գուժէ զիմ աղէտս .
Յամէն անկման սաղարթու
Դիտեմ զգուշակըն մահու :
Եպիտաւրեան պատգամ խիստ
Ասաց . « Մայրիդ ոստախիտ
» Աչացդ հանգէպ գալկասցին ,
» Այլ իցէ այն եւ յետին :
» Յաւերթ պատի զքեւ նոճին .
» Ի գերեզման տապանին
» Գունաթափեալ քան զաշունդ .
» Անկցի խամրեալ մանկութիւնդ ,
» Նախ քան զծաղիկըն գաշտին ,
» Եւ նախ քան զուռ բլբուկին » :
Մեռանիմ ես . . . Յըրաշունչք
Եւ թուփք հարին զիս հողմունք .
Եւ իբր ըստուերս խուսափուկս
Տեսի զգարունս ի փախուստ :
Անկիր տերեւդ առօրեայ ,
Յաչաց զուղիս զայս սքօղեա
Թաքո յանյոյսն իմ մօրէ
Զվայրն ուր հանգէայց յայսմ հետէ :
Այլ թ'ի մեկնակ ճեմելին
Իմ հերարձակ սիրուհին
Գայ լալ ի մուտս արեգին ,
Զարթոք մեղմ ի խօշիւն
Պահ մի սփոփեալ զիմ ուրուն :
Ասաց , գընաց անդարձակ . . .
Եւ հուսկ տերեւն որ անկաւ
Ես զօրհասին նըշանակ .
Եգին ի հող ընդ կաղնեաւ . . .
Այլ չըգարձաւ սիրուհին
Այցել մեկնակ գամբանին .
Հովիւ գաշտին միայնակ
Ելլոյժ , յածել լոկ ոտին ,
Ըղըռութիւն տապանին :

ՄԻԼԸՎՈՒԱ

ԹԱՐԳ . Մ . ՆՍՏՅԵՆ

Ա. ՌԱՓ . ՎԱՐԺ .

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱՐՈՂՈՍ Ա .

Անգղիացոց քաղաք :

Թագաւորաց մէջ՝ ինչպէս ոմանք փա-
ռօք՝ այնպէս ալ շատեր կան որ իրենց
աղետալից կենօք եւ մահուամբը պատ-
մութեանց ու արձանագրութեանց մէջ
իրենց յիշատակն են թողեր : Լյս եր-
կորդ կարգին երևելներուն (գոնէ
նոր ատեններուս մէջ) մէկն է Կարողոս
Ա . Լնգլիոյ թագաւորը , որ Սղուար-
դեանց ցեղէն կ'իջնար . այն թշուառ
ազգատոհմէն՝ որուն իր աղետից մեծու-
թեամբը նոր ու տիրադոյն համբաւ
մը պիտի աւելցնէր : Իր հայրը (Յա-
կովբ Ա . Սարիամ Սղուարդ Սկովտիոյ
հաշակաւոր թագուհւոյն որդին էր .
ով կրնար կարծել թէ այն խեղճ դըշ-
խոյին չարագուշակ բաղդը նաեւ իր
թուանը վրայ պիտի բռնանար , հաւա-
սար ցաւալի եւ տխուր վերջով մը եր-
կուքին կեանքն ալ զրաւելով :

Երբոր հայրը մեռաւ , ու Կարողոս
իրեն տեղը անցաւ 1625ին , Լնգլիա
շատ խեղճ վիճակի մէջ էր : Լյս ընդ-
հանուր պարագաներէն զատ , որ ո՛ր
իցէ իշխանի մը հասարակ են , Կարո-
լոսի մէկ ուրիշ դժբախտութեանց զըլ-
խաւոր պատճառ մ' ալ կար , որ էր Պը-
քինկէմ դքսին ձեռք ձգած հեղինա-
կութիւնը . ասիկայ Կարողոսի հօրը վը-
րայ ունեցած ազդեցութիւնը ասոր վը-
րայ ալ բանեցընելով , զինքը մեծամեծ
չարեաց մէջ ձգել տուաւ . ու հազիւ
թէ գահը ելաւ՝ տերութեան մեծա-
մեծաց խորհրդարանին հետ սկսաւ
թշնամանալ : Լյս անօրէն պաշտօնա-
կալը ոչ միայն Սպանիան Լնգլիոյ դէմ
եւ զԼնգլիա Պաղղիոյ դէմ պատերազ-
մի զրգուեց , հապա նաեւ Լնգլիոյ կա-
ռավարութեանը ու ժողովրդեանը մէջ
կռիւններ ձգեց : Թագաւորը , պատե-
րազմը շարունակելու համար խորհրդա-
րանէն դրամական օգնութիւն ուզեց .